

և Շիրվան (Աղուանք) մեծագոյն մասամբ (բացի վաչկատուն ցեղերէ) հայ քրիստոնեաներէ բնակուած էր: 1750ական թուականներուն եւ անկէ վերջ անոնք մահմետականացած են: Ղարաբաղ հայ էր ու հայ է ցարդ գրեթէ 90 առ 100 համեմատութեամբ: Հայաստանի քրիստոնեայ հիւսողները լռի հայեր էին, որոնց գորգերու համար գործածած գծածեւերը գլխաւորաբար հայ ծագում ունէին, իսկ ինչ որ իսլամական էր՝ իրենք գրեթէ հայացուցին: Այս մասին՝ իր կարգին Արուեստի գլխուն մէջ: Գորգարուեստը եւ գորգարհեստը իսլամական ծագում չունին եւ իսլամութեան ծագումէն առաջ արդէն զարգացած էին: Ինչպէս որ Վրական ճարտարագիտութեան հոգին հայկական է (արեւելեան քրիստոնէական ճարտարագիտութիւն է), նոյնպէս ալ Կովկասեան բոլոր գորգարուեստը (չինուած ըլլայ Հայաստանէն դուրս կամ դրացի մահմետականներէ) զուտ եւ որոշ հայկական է:

---